# ՆՈՐԱՕԾ Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ԹԲԻԼԻՍԻԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունիսի 29-ին բազմամարդ էր Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին: Վիրահայոց թեմի նորաօծ առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր անդրանիկ եպիսկոպոսական և Ուխտի Պատարագն էր մատուցում: Օրեր առաջ Միածնաէջ Մայրավանքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդն ստացավ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում:

Ուխտի Պատարագին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գեորգի Խոսրոևը և վիրահայ համայնքի այլ պաշտոնյա այրեր:

Հընթացս Պատարագի առաջնորդ Սրբազան Հայրն իր հոգեբուխ գոհունակությունն ու փառաբանությունները հղեց Բարձրյալին՝ իրեն արժանացրած մեծագույն պատվի համար, և գնահատանքի խոսք ուղղեց բոլոր ներկաներին՝ աղոթակից լինելու իրեն:

Պատարագի ավարտին ներկաները հրավիրվեցին համեստ հյուրասիրության փոքրատարածք, բայց և հյուրընկալ առաջնորդարանում:

Նույն օրը, երեկոյան, նորաօծ առաջնորդը, ուղեկցությամբ՝ եպիսկոպոսական օծման ընթացքում կնքահոր սրբանվեր պարտականությունները ստանձնած Աջարիայի հայերի «Վերածնունդ» միության նախագահ Արմեն Գևորգյանի, Սամցխե Ջավախեթիի և Քվեմո-Քարթլիի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանի, Վիրահայոց թեմի գործերի կառավարիչ Աշոտ Նաջարյանի և բարերար Ալեքսանդր Ռաթմազյանի, այցելեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին: Պատրիարք Հայրը ջերմագին շնորհավորանքներով դիմավորեց Գերաշնորհ Սրբազան Հորը և Տիրամոր սրբազեղ պատկերով մի եպիսկոպոսական պանակե նվիրեց նրան:

Հանդիպումն անցավ ջերմ ու սրտաբաց մթնոլորտում:

*Դիվան Վիրահայոց թեմի*
*Առաջնորդարանի*